

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Մ Շ Ա Կ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանիսի բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Հ Ր Մ Ն Ա Դ Ի Ր Գ Ր Ի Գ ՈՐ Ա Ր Ծ Ր ՈՒ Ն Ի

ԲԱՑՎԱԾ Է ԿԵՍ ՏԱՐՎԱՅ ԲԱԺԸՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ Շ Ա Կ

ԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«Մշակ» վեց ամսվայ գինն է, յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը Վեց ռուբլի. մէկ ամսվայը—մէկ ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարվայ համար 3 դոլար, Աւրոպայի բաժանորդները—16 ֆրանկ:
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտնել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“; իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.
Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:
Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն ՈՐ Դ Ա Գ Ր ՈՒ Թ ՈՒ Ն Զ Է Ը Ն Դ ՈՒ Ն Վ ՈՒ Մ

ԲՈՎԱՆԻՎԱԿՈՒԹԻՒՆ

Առաջին տեղեկութիւնները. — Ներքին Տե-
ստութիւն. Մամուլ. Կենդանի ապրանքի շուր-
ջը. Նամակ նուիրուց. Նամակ Զանգեզուրի գա-
ւառից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լու-
րեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Արտաքին լու-
րեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — Հեռագրեր. — ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կուլիկ
խաթունին ժառանգութիւնը:

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ներկարաւ երաշտութիւնը, որ սկսած
ձմեռվանից շարունակվում էր Թիւրքիա-
յում, մեծ երկիւղ էր ազդում ազգա-
րանկութեանը: Սակայն գարնան երկրորդ
կիսում սկսեցին յորդ անձրևներ տեղալ և
փչացած արտերի մի խոշոր մասը վերա-
կենդանացաւ: Ընդհանրապէս բերքը սպաս-
վում է բաւարար, և ընդհանուր քանակ-
ութեամբ միջին չափից բարձր: Գերմա-
նական զորքերի ներքին, որոնք այժմ հա-
մեմատարար աւելի ճիշդ տեղեկութիւն-
ներ ունեն Թիւրքիայի մասին, քան իրանը
օսմանցիները, յայտնում են, որ ներկայ
տարվայ գիւղատնտեսութեան համագու-
մարը կը լինի նպաստաւոր և ուրեմն ա-
ռանձին երկրիւրի և վրդովմունքի տեղիւր
է կարող լինել այդ մասին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՈՒԼԻԿ ԽԱԹՈՒՆԻՆ ԺԱՌԱՍԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Բերայի հին ատենն էր, այսինքն մեծ հրդե-
հէն շատ առաջ, Կուլիկ խաթունը և իր մէկ
հատիկ աղջկը, Տուտուն, իրանց սեփական
նեղ ու փայտաշէն տանը մէջ կը բնակէին:
Անոնց տունը երեք անգամ հրդեհէն այրած
էր, և բերացիք զարմանքով կը տեսնէին, որ
Կուլիկ խաթունը, թէև որբնայրի կին մը, լե-
ցուն պայուսակ մը կը բերէր և այրած տունը
փութով կը վերակառնէր:
Այս երկու կնոջ ստացուածը հանելուկ մը
զարձած էր. ամեն մարդ հարուստ կը կարծէր
զանոնք և զաւակէ զաւակ Կուլիկ խաթունին
անուովին վրա կը խօսէին, շատ ու շատ լե-
ցուն էր այն և հարկաւ մղուած ոսկիներով լի:
Կուլիկ խաթունին խորամանկութիւնը ամեն
մարդ գիտէր: Երբ որ մէկը խրատի մը պէտք
ունենար, իսկոյն անոր կը դիմէր և այդ տանը
վերի յարկին նեղ սենեկին մէջ էրիկ մարդիկ
չէին արհամարհեք անոր խօսքերէն օգտվելու:
Խաթունը պարզապէս գործ կարգադրող մըն
էր և ամբարներուն բարեկամը ըլլալուն հարուստ
աղաներուն ըով անոր խօսքը երկուք չէր ըլ-
լար, ու այդ պատաւը այդ տեղին գրեթէ բե-
հան զարձած էր. ամեն խոշոր առուստուր կըր-
նար կարգադրել, հարկաւ փոխաբէն ստանա-
լով բայց թէ վճարողը և թէ ընդունողը ե-
րախտապարտ կը մնար իրեն ճարտարութեանը

Պարսկաստանի վերաբերութեամբ
եղած տեղեկութիւնները նոյնպէս ընդհա-
նուր առմամբ նպաստաւոր են: Վերջին
երկու ամիսների անձրևները այնտեղ ևս
օգնեցին ցանքերի բարւոքման և ընդհա-
նուրայն այնտեղ ևս բերքը կը լինի միջին
արդիւնաբերութեան հաւասար, կամ փոքր
ինչ բարձր:

Սակայն կան մի քանի հանգամանքներ,
որոնց պատճառով ազգաբնակչութիւնը չէ
կարող իրան համարել ազատ նեղութիւն-
նից և կարօտութիւնից: Դրանցից ամենա-
կարևորները հետևեալներն են: Մի քանի
տեղերի գիւղական ժողովուրդը, որինակ,
Վասպուրականում, անկարող եղաւ ցանել
իր բոլոր արտերը. սովի պատճառով եր-
կարգործները իրանց մօտ եղած հացահա-
տիկների մեծ մասը կերան և չը կարողա-
ցան սերմացուի համար բաւականաչափ
պաշար ձեռք բերել, այնպէս որ բուսած
ցանքերի նոյն իսկ առատ բերքը անկարող
է ապահովել տեղական կարիքները: Աւե-
լայրէջ դրան և այն, որ մի շարք գիւղա-
կան հողեր նոյն իսկ ենթարկվել են ե-
րաշտի և ապա կարկուտի, իսկ ընդհա-
նուրայն խոտահարքը վնասվել է և շատ
բիշ արդիւն է տուել: Պարսկաստանում
մի ուրիշ հանգամանք ծանրացնում է դը-
րութիւնը. այդ այն է, որ այնտեղ մեծ

համար:

Այս այս էր Կուլիկ խաթունին ստակի աղ-
բերը:
Գաղտնիք մըն էր այս շահակից չըլլալուն, և
հաւանականաբար ոչ անոր դիմողները մէջտեղ
կը հանէին այս և ոչ ալ ինքը կը պատմէր, իսկ
Տուտուն, անոր աղջկը, որ յիսուն տարեկան
եղած էր և չէր ամուսնացած, կրնար երևակա-
յել պարծենկոտ կերպը, երբ որ վերջապէս լուր
տուաւ տանը բազմաթիւ բարեկամներուն, որ
բիշ ատենին պիտի ամուսնանար:
— Այո, պիտի ամուսնանամ և հարուստ պիտի
ըլլամ, կը կրկնէր ծախած ձայնով մը:
Ունեցողները զարմանքով իրարու կը հարց-
նէին թէ ո՞վ կրնար ըլլալ այդ պատու աղջկը
առնողը. միթէ կոյր էր, չէր տեսած գլխուն
մազերը, որ կեղծ էին, իսկ ակառները կոտոր-
ած, սև. հապա թուռած թշերը, կաւեցնէին, և
ինչպէս մըն էր կը բռնէր:
Բայց Տուտուն, ուրախ ընաւորութիւնը աւելի
զուարթացած, տեսակ տեսակ առաւապել խօս-
քերով ամենուն սիրտը իրեն քաշել կը ջանար:
— Նայենք հարսնիքին ինչ ընծայ պիտի բե-
րէք, կըսէր:
Հիմա սիրտը հանդարտ պատուհանին առաջը
կը նստէր և տունը, որ աղբիւրի մը ճիւղի դէմն
էր, անոր առաւ զուարթութիւն կը հայթայթէր:
Փողոցէն անցնող զարմանքին հետ կիշնար,
եկող ջուր առնող աղքատիկ ժողովուրդին հրա-
մաններ կը բաշխէր:
— Ծօ, դուք անտին կեցիք, կը պօռար, որ
Մայրամը իր սափորը լեցնէ:
— Փա Բեթիկ, ինչ կը զարնես չօճուխին,
վայ գայ գլխուդ:

Ճաւարով տարածված է հացի վա-
շառութիւնը և եղած բաւարար
բերքը չէ կարողանում լրացնել տեղական
պահանջը:

Մեզ համար շատ կարևոր է, որ մեր
սահմանակից երկրների ազգաբնակչութեան
տնտեսական կեանքի ձախող հանգամանք-
ները չը վնասէին և մեր երկրի տնտե-
սական վիճակին: Ուստի, եթէ չենք կա-
րող աղբիւ մեր հարեւան երկրների վրա,
պէտք է կարողանանք զոնէ նախազգու-
շութեան միջոցներ ձեռք առնել, որպէս
զի մեր ազգաբնակչութիւնը չը տուժի և
ստիպված չը լինի տպարդիւն զոհեր ունե-
նալու: Յամենայն դէպս շատ ցանկալի է,
որ մեր սահմանակից երկրների տարվայ
բերքի մասին ստացած տեղեկութիւնները,
որոնք առայժմ նպաստաւոր են, լրացվեն
նորագոյն աւելի ճիշդ ցուցումներով: Դեռ
փոփոխութիւններ շատ կարող են լինել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ ՈՒ Լ

Անպատարատ, տգէտ ժողովուրդների համար
աղէտը միայն այն չէ, երբ մի որ և է Լէնկթէ-
մուր է արշաւանք գործում, այլ և այն, երբ
նրանց կուսական, հարուստ երկրի ծոցում երե-
ւան է գալիս դիտութեամբ, նախաձեռնող ոգով
և նիւթական միջոցներով զինված շահագործու-
թիւնը: Նրկաթուղային այն ցանցերը, որ եւրո-
պական մրցութիւնը տարածում է հին, քաբա-
ցած Զինաստանի մէջ, անշուշտ պիտի լոյս հա-
նեն այդ մեծ երկրի հարստութիւնները, պիտի
յարբուցեն անտեսական մեծ իրարացում:
Հարցը այն է թէ տեղական ժողովուրդը, երկրի
բնիկ բնակչութիւնը կը կարողանայ ըմբռնել
նոր կեանքի պայմանները, կը կարողանայ ա-
զատվել իր դարաւոր կապանքներից և գնալ նոր
ուղղութեամբ, գործունէութեան ոյժ, դիմացկա-
նութիւն ցոյց տալ իր համար անծանօթ և ան-
սպասելի կերպարանափոխութեան մէջ: Եթէ
կարողանայ, այն ժամանակ եւրոպացիների
մուտքը կը դառնայ երկրի համար նոր օրվայ,
նոր բախտի արշաւոյ. իսկ եթէ շարունակէ մը-
նալ իր անշարժութեան մէջ, եթէ ցոյց տայ, թէ

միանգամայն անընդունակ է նոր կեանք ստեղ-
ծել և նոր պայմաններն իւրացնել, այն ժամա-
նակ, ի հարկէ, եւրոպական արշաւանքը այդ
ժողովրդի համար կը լինի մի աղէտ, տնտեսա-
կան աղէտ, որ քաղաքական աղէտներից պա-
կաս ուժեղ և ցնցող չէ: Այդ աղէտի անունը կը
լինի՝ տնտեսական ստրկութիւն: Մեր դարում
շատ աղբիւ են վայելում քաղաքական կատա-
րեալ ազատութիւն, բայց շարունակվում են ամ-
բողջ դասակարգք, անազին մասսաներ պահել
տնտեսական ստրկացման մէջ և մենք տեսնում
ենք, որ այս վերջին տեսակ ստրկացումը աւելի
խիտ է, տևական, անողորմ: Քաղաքակրթու-
թեան հիմնական օրէնքներից մէկն էլ այն է,
որ ով չէ կարողանում ձեռք բերել բարեկեցիկ
կեանքի անհրաժեշտ պայմանները, նա պիտի
դառնայ ուրիշի ստրկուր: Այս երկրները,
որ եւրոպական ձեռնարկութիւնը անցնում է
իր տնտեսական կեանքի ամենահզօր շարժիչ-
բից մէկն ու մէկը, շահագործութեան այս կամ
այն տեսակը, եթէ ետանդոտ, նախաձեռնող
ոյժեր չը տայ, եթէ չը կարողանայ ինքն էլ
օգտվել նոր պայմաններից, պիտի ընդունէ մի
զոհի դերը, որից դուրս են ծծում բոլոր հիւ-
թերը: Այդպիսի երկրներից մէկն էլ Փոքր-Ա-
սիան է: Այնտեղ էլ արդէն սկսել են սուլել շո-
ղեմեքներն, և եւրոպական մրցակցութիւնը,
ինչպէս գիտենք, պատրաստվում է երկաթուղի-
ների գծերը մեծացնել: Ինչ դերը կը բռնէ ազ-
գաբնակչութիւնը այդ նոր պայմանների առաջ:
Սա ժամանակակից մի հարց է, հետաքրքրական
մեզ համար, քանի որ նոր հոսանքը պիտի չօ-
շափէ հայ ազգաբնակչութեան մի խոշոր մասի
շահերը: Հասկացնել իրենի դրութիւնը, առաջ-
նորդել ժողովրդի միտքը կարող է ի հարկէ,
միայն Կ. Պոլսի հայոց մամուլը, որ ձայն է
հասցնում այն տեղերը, ուր պատրաստվում է
տնտեսական-կուլտուրական մեծ յեղափոխու-
թիւնը: Մենք տեսնում ենք, որ այդ մամուլը,
որի աւանդական ուղղութիւնն էր զխառաւորով
և շեղաշուրջ տիպոգրֆերով երկրպագել դերա-
պաւորներին ու վսեմաշուքներին, տպագրել
եկեղեցական քարոզներ, թաղական վէճերին
ամբողջ սրտնակներ նուիրել, սկսում է այժմ
թէև շատ համեստ չափերով, ուշադրութիւն
դարձնել և այնպիսի տնտեսական հարցերի վրա,
որոնք կեանքի և մահվան նշանակութիւն ու-

էր, ճակտին դոյնդոյն ծաղկիները իր կեղծ
մաղբերուն խոպոպիկներուն հետ կը խառնվէին,
զմբուխ օղբը ականջը ու մատանին մատը
կը փախկար:

Տուտուն երջանիկ էր և ամուսնին հետ բծնե-
լով կը խօսէր. ան բազմոցին մէկ անկիւնը
նստած և էրիկը միւս անկիւնը ծաղկապտիկ
բազմած էր:
Բայց միայն բան մը կար, որ նոր հարսը կը
նեղացնէր և անոր համար էր, որ նոյն օրը Յու-
վակիմ աղային հետ քիչ մը տաք կերպով խօ-
սելու ստիպված էր: Յուվակիմ աղայ, որ արթի
էր, վարդի նման իր փուշերն ունէր: Նրկու որբ
զաւակները, որոնց մին աղջիկ էր և միւսը հա-
սուն երկասարաղ մը, հետը բերած էր, ու հի-
մա, առաւօտէն մինչև իրիկուն, կըսէր Տուտուն,
օձիքը կը շտկէ ու հայելին դէմը մօրուք կը
սանրէ, Բէրայի փողոցները չափեցնէ ալ չը
ձանձրացաւ, սիրտն ալ չի նեղանար, ասոր
վերջը ձու պիտի երթայ:

Բայց երբ որ տեսաւ որ էրիկը ձայն չէր հա-
նէր ու կը շարունակէր մշիկ մշիկ չիպուլը
ծիւկ, բարկացած ձայնը բարձրացուց:

— Ինչու պապան ես, գոռաց, բարմախիսի
պապան ես դուն, որ խօսք չես կրնար հաւա-
կցնել: Այ բանի, գործի թող ըլլայ, իսկ աղջիկը
լսես առաւօտէն մինչև իրիկուն վերի պատու-
հանը նստած անց ու դարձը կը դիտէ:

— Հոգիս, պոտախանայից Յովակիմ աղա, չի-
պուլը բերնէն դուրս հանելով և դէպի առաւ-
տաղը քշելով ծխախոտին սպիտակ ծուխը,—
գառնուկա, ինչ ընծա, չիպուլ օր մը անոնց ալ
խելը գլուխը կուգայ, ջահիլ ես, ինչ ընծա:
— Ինչ, ըսաւ Տուտուն աւելի բորբոքած, այդ

թիւն
 զօտո
 ինծե
 հանք
 բուծ
 էր
 ԵՄշ
 Պետ
 վրայ
 զտն
 բաժն
 պէս
 կողմ
 Բ
 էին,
 կար
 նեկ
 ձեռք
 վերս
 իւրա
 մետ
 տալ
 թիւն
 էր, ա
 հազո
 յիրա
 որ Կ
 թէ ա
 ներ
 օտար
 տան
 նաբ
 վին
 Ան
 քայք
 Գիւղ
 բախ
 աղէս
 Եր
 Թաղ
 ԲԸ,
 աւա
 ամա
 չաց
 եղել
 է սա
 րաւ
 սկսվ
 Եր
 սկսվ
 ի է
 բրդ
 չափ
 Լուս
 չափ
 Դոսկ
 երու
 արկ
 արա
 արդ
 եռք
 օժոժ
 ակու
 անա
 անխ
 Եբր
 ռա
 անի
 Վհ
 ՄԵ
 ՉՉԻ
 ւան
 երու
 ասն
 Ծըղ
 բք
 նե
 ին
 ցին
 յոյն
 արկ
 ւն
 ւն

Типографія Грузинск. Т.—ва Орбеліановская ул., № 27.